

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺԾՏՈՒԹԻՒՆ

Արտիստական թատրոնում

Հայ Դրամատիկական Բնկերութեան խմբ
ներկայ սէզօնի երկրորդ ներկայացումը զու-
գաղիսլվեց տառերի դիւտի 1500-ամեակի
տպագրութեան 400-ամեակի յօրելեաններին:

Համազգային այդ մեծ տօնի առիթու-
խմբի բեժիսեօր Արմէնեան զեռ օրեր ա-
ռաջ պատրաստել էր մի ոլիէս ռԱսհակի
Մեսրոպյանունով, որին նա անուանել էր
Հարարուածով ակնարկ:

Եւ ահա այդ ռԱսհակի և Մեսրոպյանով
նաև ներկայացվեց հոկտ 14-ին Արտիս-
տական Բնկ. թատրոնում:

Թատրոնի շինութեան մուտքը զոյնզգոյն
լուսաւորված և կանաչազարդ էր, որոնց
մէջ աչքի էին ընկնում երկու վեհզիւ՝ «1500»
և «400» թւանշաններով:

Մեր ասելիքը Արմէնեանի հեղինակու-
թեան մասին կը լինի ամփոփի ռԱսհակի և
Մեսրոպյանունովայի ոչ դրամա է, ոչ էլ
նոյնիսկ սովորական ոլիէս, և որպէս այդ-
պիսին նա չէ կարող զիմանալ ոչ մի քննա-
դատութեան: Սակայն իրքն օրվայ պատշաճ
այնինատական ակնարկ՝ տառելի դարձաւ, մա-
նաւանդ որ մասսայի համար ուսանելի է
ցոյց տալ՝ թէ ինչպէս զանվեցին հայ տա-
ռերը Մեսրոպի ձեռքով, ինչպիսի դրու-
թիւն էր տիրու մինչև այդ տառերի դիւ-
տը Հայաստան աշխարհում, որպիսի դրու-
թիւնը դրգեց լուսամիտ Մեսրոպին զանել
հայ տառերը, և ո. Ասհակի կաթողիկոսի,
վաճառապուհ թագաւորի և իր արժանաւոր
աշխակերտ Կորիւնի աջակցութեամբ զարու-
թիւն տարածել յայն և ասորի մթնոլորտում
զոլոնվող հայութեան մէջ և այլն և այլն:

Զենք խօսութ մի քանի երկարաբա-
նութեան, անհամազատասիրան զգեստների,
կարասիքի, զէնքերի, երգերի, պարերի ժա-
մանին, որոնց զուտ հայկական լինելու ամ-
բողջ պատասխանատութիւնը թողնում ենք:

Կրկնում ենք, յամենայն դէպս հանդի-
սաւոր օրվայ առիթով Արմէնեանի հեղինա-
կութիւնը ընդունելի նկատվեց, թէ և հար-
կաւոր էր ներկայացնել աւելի շուտ Փողո-
ւըրդական Տանը:

Հասարակութիւնը, որ բաւական մեծ թիւ-
էր կազմում այդ օրը, չտփազանց դժգոհեց
միջարաբների ձանձրացուցիչ երկարու-
թիւնից: